

ՆՈՒՆԵ ԼԵՆՍԵՐԻ ՄԿՐՏՉՅԱՆ

Բանասիրական գիտությունների

թեկնածու, դոցենտ

ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության

ինստիտուտի ավագ գիտաշխատող

nunemkrtchyan.69@mail.ru

ORCID ID: 0009-0006-0459-1911

DOI: 10.54503/978-5-8080-1557-9-277

ՍԻՐՈ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ («ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՍԵՐ», «ԼԻԼԻԹ»)

Բանալի բառեր՝ Իսահակյան, ռոմանտիզմ, սիրո կենսահաստատու ռիթմ, քնարական տրամադրություններ, փիլիսոփայություն, հրեղեն, հրաշագեղ Լիլիթ:

Ներածություն

Յուրաքանչյուր նշանավոր արվեստագետ եզակի մտածող է, ըմբռնում է կեցության փիլիսոփայությունը և փորձում իր գրական գործունեությամբ վեր հանել կենսական ճշմարտություններ: Գրականագիտությունը միշտ մեծ ուշադրություն է դարձրել «գրական պրոցեսի ուսումնասիրությանը որպես ամբողջականություն և նրա զարգացման օրինաչափությունների, բաղկացուցիչ տարրերի փոխադարձ կապի և պայքարի բացահատում»:¹

Իսկ գրական գործընթացը, լինելով պատմական ընթացքի բաղկացուցիչ մասը, ենթարկվում է հասարակության զարգացման ընդհանուր օրենքներին, արտացոլում հասարակական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները: Գրականության զարգացման վրա իրենց խոր կնիքն են թողնում ոչ միայն սոցիալ-տնտեսական հարաբերությունները, այլև ժամանակի գիտական, փիլիսոփայական, քաղաքական, կրոնական, բարոյական գաղափարները:

¹ Литературный процесс, Сборник статей под редакцией Г.Н. Поспелова, М., 1981, 236 с.

XVIII դ. վերջի – XIX դ. առաջին կեսի գրականության, հոգևոր մշակույթի ուղղություններից է ռոմանտիզմը՝ կլասիցիզմին հակադիր նոր գրական ուղղությունը, որը դարձավ սիրո մասին նոր իդեալների արտահայտություն: Էդ. Ջրբաշյանը նկատում է, որ «հանդես գալով XVIII դարի վերջում, ռոմանտիզմը խստորեն հակադրվեց կլասիցիզմին՝ առաջին հերթին դեմ դուրս գալով վերջինիս նորմատիվությանը... Ռոմանտիկ գրողները հռչակեցին ստեղծագործական լիակատար ազատություն՝ մեծ դեր հատկացնելով ստեղծագործող անհատին»:²

Ռոմանտիկները ոգեշնչման համար նայում էին բնությանը, արվեստին և ներաշխարհին, իսկ նրանց ստեղծագործությունները, ինչպիսիք են բանաստեղծությունները և վեպերը, մարմնավորում էին հուզական գաղափարներ սիրո մասին: Հյուգոն իր «Կրոմվել» դրամայի նախաբանում գրել է. «Չկային ոչ կանոններ, ոչ տիպարներ... Բանաստեղծի խորհրդատուները պետք է լինեն միայն բնությունը, ճշմարտությունը և իր ոգևորությունը»:³

Մեր հետազոտության նպատակն է ներկայացնել և այլ դիտանկյունից պարզաբանել Ավ. Իսահակյանի «Հավերժական սեր», «Լիլիթ» ստեղծագործություններում սիրո հավերժության փիլիսոփայությունը, քննել իսահակյանական գեղարվեստական խոսքի մեծ ուժով պատկերված եթերային, մաքուր քնարական ապրումները, անարձագանք սիրո ծանր ողբերգությունը:

Թեմայի գիտական նորույթն է դիտարկել սիրո խնդրի վերաբերյալ նոր տեսակետներ՝ ընդլայնելով ընթերցողների հորիզոնները, հանրահռչակել Իսահակյան հանճարի սիրո հավերժության գաղափարները, որոնք կամրապնդեն սիրո, ընտանիքի և ամուսնության ինստիտուտը ժամանակակից հասարակության մեջ: Քանի որ մեզանից յուրաքանչյուրը վաղ թե ուշ սկսում է մտածել հավերժական հարցերի՝ կյանքի, մահվան, Աստծո, ճշմարտության, սիրո մասին, որը մարդու ամենառոմանտիկ հոգեվիճակն է ու կյանքի շարժիչ ուժը:

Մեր խնդիրն է բացահայտել Իսահակյանի «Հավերժական սեր», «Լիլիթ» ստեղծագործությունների առանձնահատկությունները, ցույց

² **Ջրբաշյան Էդ.**, Գրական ժանրեր. պատմական զարգացումը և ժամանակակից վիճակը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1973, էջ 54:

³ **Литературные манифесты западноевропейских романтиков**, М., изд.-во Московского университета, 1980, с. 453–454.

տալ բանաստեղծի համար ստեղծագործական ներշնչման հատուկ առարկա դարձած հասարակական-բարոյական բարձր գաղափարներով և մարդկային ազնիվ զգացումներով տոգորված սիրո ռոմանտիկան, որն ընդունակ է մղելու մարդուն դեպի հերոսացում, անձնագոհություն, արհամարհելու անգամ մահը, առաջին անգամ ճանաչողության դաշտ բերել բնության և կնոջ մասին դիտարկումները: Վերլուծական-նկարագրական մեթոդով մենք ցանկացել ենք ներկայացնել մեծ գրողի ստեղծած փիլիսոփայական համամարդկային նշանակություն ունեցող գործերը, քննել կերպարների կերտման իսահակյանական առանձնահատկությունները:

Ավ. Իսահակյանի ռոմանտիզմը

XIX դ. դարասկզբին նկատելիորեն աշխուժացած ռոմանտիկական պոեզիային բնորոշ են Ավետիք Իսահակյանի՝ այդ շրջանի խոշորագույն և ամենաազդեցիկ հայ գրողներից մեկի ստեղծագործությունները, որոնք դարձան իդեալական սիրո խորհրդանիշեր: «Իսահակյանը հայ նոր գրականության ամենաբարդ և միևնույն ժամանակ ամենահետաքրքրական դեմքերից մեկն է»⁴, – նշում է Հովհ. Ղանալանյանը:

Արդեն իսկ քննադատության առաջին արձագանքների մեջ նկատվեց Իսահակյանի սերտ կապը ռոմանտիզմի հետ: Օրինակ՝ Ալեքսանդր Ռուբենին նշում էր, որ «միանման բանաստեղծութիւնների մէջ, որոնք իրանց ընդհանուր կոլորիտով, երբեմն ռոմանտիզմի, երբեմն էլ դեկադանսի ու սիմվոլիզմի դրոշմ են կրում, գլխաւորապէս աչքի են ընկնում մի քանի մոտիւններ, մտորման, վշտի, սիրոյ. վերջինիս մէջ են մտնում և ժողովրդական այն մոտիւնները, որոնց մէջ պատահած գեղեցկութիւնները ընտիր են իրանց տեսակում մեր ամբողջ քնարեգութեան մէջ»:⁵ Իսկ մի քանի տարի անց Պ. Մակինցյանը շատ ավելի որոշակի գրում է. «Ավ. Իսահակյանը ռոմանտիկ է. համաշխարհային վշտի շերտեր են կրում նրա երգերը»:⁶

Ահա այս շրջանում ի հայտ եկան Վարպետի գրական ստեղծագործությունները՝ ոգեշնչված ռոմանտիզմի իդեալներով, որոնք դար-

⁴ **Ղանալանյան Հովհ.**, Ավետիք Իսահակյան (Կյանքն ու ստեղծագործությունը), Եր., Հայպետհրատ, 1955, էջ 3:

⁵ «Մուրճ», 1904, №3, 131:

⁶ «**Գարուն**», գրական-քննադատական ամսանախ, գ. 3, Մ., 1912, էջ 346:

ծան իդեալական սիրո խորհրդանիշեր: Վերածննդի և լուսավորության դարաշրջանում իսահակյանական սիրավեպը սկսեց համակցվել բանականության և ինտելեկտուալ գաղափարների հետ. «Ժամանակագրական կարգով և իրենց էութամբ Իսահակեանի ստեղծագործութեան մէջ առաջին տեղը գրաւում են քնարական երգերը»:⁷ Ինչպես նշեցինք, Իսահակյանին ամենից շատ հուզող նրբալար թեմաներից է սերը: Սիրո զգացմունքը Վարպետի կախարդական քնարի ամենահիմնական շարժառիթներից է. երբեք չլռող «...սիրո երջանկության ու բուռն կարոտի, նաև սիրո տրտմության, վշտի ու տանջանքի զգացումով են տոգորված ...գրեթե բոլոր ստեղծագործությունները»:⁸

Ի՞նչ արժեք ուներ սիրո ռոմանտիկական պոեզիայում, մի ռոմանտիկա, որը մեր գրականության մեջ բացառիկ գեղեցկությամբ ներկայացրել է Վարպետը: Արդյոք Ավ. Իսահակյանը այդ գործերով ցանկանում էր լցնել «իր սիրո դատարկությունը»: Գուցե մասամբ է դա ճիշտ: Բայց դա կլինի սիրո ռոմանտիկայի ոչ լիարժեք բացատրություն: Ինչպես նկատել է Էդ. Ջրբաշյանը, Իսահակյանը գերազանցապես զգացմունքի բանաստեղծ է. նրա յուրաքանչյուր միտք կրում է հուզական զեղման կնիք և կարող է կոչվել քնարական խոհ: Դեմիիճյանը, անշուշտ, այս իմաստով էր ասում, թե Իսահակյանն իր մտքերն արտահայտում էր սրտի միջոցով. «Իսահակյանի բանաստեղծական արվեստը թեև հմայում է հույզերի առատությամբ, բայց չի շլացնում և դրա պատճառը խոսքի և հույզի անմիջականության մեջ է միաժամանակ»:⁹

Իսահակյանական հավերժական սիրո վեհությունը

1910-ական թթ. Իսահակյանը ստեղծագործական հատուկ նախասիրություն է հանդես բերում դեպի լեզենդի և բալլադի ժանրը: Պատմության դրամատիկ այդ ժամանակաշրջանում հումանիստ բանաստեղծն իր հայացքն ուղղում է դեպի մարդկության անցյալը, հայկական և

⁷ **Երեմեան Ար.**, Ավետիք Իսահակեանի պոեզիայի հիմնական գծերը, Նոր-Ջուղա, տպարան Ս.Ամենափրկիչ վանքի, 1946, էջ 11:

⁸ **Հայ նոր գրականության պատմություն**, հատոր 5, Եր., ՀՍՍՀ ԳԱԱ հատ., 1979, էջ 28:

⁹ **Գրիգորյան Ար., Ջրբաշյան Էդ.**, Ավետիք Իսահակյանը և ռոմանտիզմը, «Ավանդույթները և գեղարվեստական զարգացումը», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1976, էջ 286:

այլ ժողովուրդների ավանդությունների սյուժեներով ստեղծում գեղարվեստական հիանալի էջեր, որոնք հաստատում են դարերի կենսափորձով իմաստնացած հոգևոր արժեքների հավիտենական ճշմարտությունը: «Ժողովրդական մոտիվներն Իսահակյանի մոտ դառնում են հատկապես անձնական հույզերի արտահայտման միջոց: Քիչ բացառությամբ, այդ ոգով է ստեղծված նրա ողջ սիրային քնարերգությունը»¹⁰, - նկատում է Ալբերտ Մուշեղյանը:

Հոգեպարար երգեր են Իսահակյանի լիրիկական պոեմները՝ «Հավերժական սերը» (1914), «Ասպետի սերը» (1917): Այդ երազանքն է բանաստեղծին մղել դեպի ժողովրդական սիրավեպի և սիրային ավանդությունների մշակումը՝ ստեղծելով անկրկնելի «Լիլիթ»-ը (Վենետիկ, 1921), որտեղ Իսահակյանը «Հնագույն առասպելը մարդու ծննդյան մասին օգտագործել է սիրո գեղեցկությունը փառաբանելու համար»:¹¹

«Հավերժական սերը» լեգենդում գովերգվում է հավերժական սիրո վեհությունն ու գեղեցկությունը. Իսահակյանը կառուցում է փիլիսոփայական մի աշխարհ, խորհրդածում սիրո և բնության առեղծվածների մասին, կյանքի իմաստը քննում մարդկության հոգևոր արժեքների հազարամյա փորձի մեջ: Նա լսում է դարերի ծայնը և ավանդական իմաստությունների մեջ ստուգում իր ժամանակի ճշմարտությունը, հնչեցնում է անհայտ և անանուն մի երգ, որն իր կախարդական հրապույրով դյուրան է ընթերցողին: Իսկ «Լիլիթ»-ում մեղեդու պես նուրբ ու գեղեցիկ, բանաստեղծական աննման պատկերներով ու նկարագրություններով, Իսահակյանը «բացահայտել է հողեղեն Ադամի և հրեղեն Լիլիթի բարդ ու իրարամերժ ապրումները, գովերգել երազային-ռոմանտիկ սիրո չխամրող հմայքը, մարմնավորելով այն բոլոր «տանջող և ապրեցնող հրապույրների արևադրյուր», «չճաշակված ու անհաղթահարելի», հրաշքների և հմայքների միակ դրախտ «կնոջ՝ Լիլիթի սիմվոլիկ կերպարի մեջ», - նշում է Ղանալանյանը¹²: Երկու գործերը, սակայն, լեզվաոճական առումով միանգամայն անհամեմատելի են: Ոչ թե

¹⁰ **Մուշեղյան Ա.**, Ժամանակ և գրականություն, Ավետիք Իսահակյանի վաղ տարիները, (1875–1898), Եր., «Սովետական գրող» հրատ., 1983, էջ 98:

¹¹ **Ասմարյան Լ.**, Ավետիք Իսահակյան, Եր., «Գիտելիք» հրատ., 1975, էջ 50:

¹² **Ղանալանյան Հովհ.**, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, էջ 25:

մեկն ավելի լավն է՝ ի հաշիվ մյուսի, այլ յուրաքանչյուրը համահունչ է տվյալ թեմայի ասելիքին: «Լիլիթ»-ում սիրո կրակն է ցոլանում, դրախտային պատկերները կարծես հրդեհված են այդ կրակով: «Հավերժական սերը» ավանդազրույցում գրողն անդրադարձել է չխամրող և հավերժ ապրող սիրո թեմային: «Լիլիթ» սքանչելի արձակ լեգենդ-պոեմի նախնական նյութը վերցված է հրեական «Թալմուդ» առասպելից: Ինչպես «Լիլիթը» այնպես էլ «Հավերժական սերը» ևս ունի իր արևելյան տարբերակները: Այն նաև ավելի պատմականացված է և կապվում է «արաբական Հոմերոսի»՝ Անթարի կամ Անդարի հետ, ով համարվում է բեդվինների պաշտպանը և առաջնորդը: 1833 թ. հրատարակված «Новоселъ» ժողովածուի մեջ տեղ է գտել Օ.Ի. Սենկովսկու «Անթար» վեպը, որն այնուհետև հայերեն է փոխադրել Գ. Պախալյանը, որը տպագրվել է «Հյուսիսսփայլի» առաջին համարում: «Սենկովսկու և Իսահակյանի «Հավերժական սեր»-ը համեմատելիս երևում է, որ այն պետք է նախօրինակ ծառայած լինի Վարպետի համար», – նկատում է Ա. Մկրտումյանը¹³: Սակայն Մարգո Մխիթարյանը Վարպետի հետ ունեցած զրույցից պարզում է, որ «նա լեգենդի գրության համար իբրև հիմք ընդունել է «Անթարի երգեր» վերնագրով արաբական զրույցը և ժամանակին ծանոթ չի եղել Պախալյանի փոխադրությանը»¹⁴:

Ծանոթանալով «Բազմավեպի» 1858 թ. տարբեր համարներում «Անդար, արաբացի քերթուած» խորագրի ներքո լույս տեսած Անթարի քաջագործությունների դրվագներին՝ Իսահակյանը «Անթարի» պատմության և նրա վերջաբանի վրա հիմնում է «Հավերժական սերը», որի հայերեն փոխադրությունը ևս սիրո գերբնական, հրաշապատում բնույթ ունի: Սիրո հավերժականությունը շարունակվում է ոչ թե իրական, այլ ոգեղեն աշխարհում: Բուն պատմությունից գրողը վերցնում է Պալմիրայի կամ Թադմորի մի քանի գեղեցիկ նկարագրություններ, որոնք, սակայն, անհամեմատ դժգույն են Իսահակյանի ստեղծած պատկերների առջև:

Ինչպես Սենկովսկին Անթարի մասին պատմությունների հիման վրա նոր ստեղծագործություն է գրել, նույն կերպ Իսահակյանը կատարել է նոր ընդհանրացում՝ առավել խտացնելով հավարժական սիրո

¹³ **Մկրտումյան Ա.**, Անթարի արաբական ավանդությունը և Իսահակյանի «Հավերժական սերը», «Բանբեր Հայագիտության», Եր., 2017, N 1 (13), էջ 139:

¹⁴ **Մխիթարյան Մ.**, «Հյուսիսսփայլ» ամսագիրը, Եր., ԵՊՀ հրատ., 1958, էջ 174:

գաղափարը, այն ազատելով արկածային վիպական բոլոր մանրամասներից, գործողությունները կենտրոնացնելով Թադմորի ապարանքում, որտեղ սկսվում, բայց չի ավարտվում նրանց սերը: Ավանդության արձակ վերամշակումը չափածո դարձնելով՝ Իսահակյանը չի ենթարկել միայն բանաստեղծական վերաշարադրանքի, այլև գեղարվեստական վերացարկմամբ մի քայլով ևս հեռացրել է Սենկովսկու ստեղծագործությունից: Եթե արձակում առանձին տեղերում երևում են ռուս գրողի «Անթարի» հետքերը, ապա դրանք լիովին ջնջված են չափածոյում: Վերջինս կրել է նաև իմաստային կարևոր մի շրջափոխություն՝ կապված երկու սիրահարների հետ. Իսահակյանի մոտ Անթարը միանգամից պատկերվում է ընկղմված սիրո հավերժական և անսահման ընթացքի մեջ: Ինչպես դիպուկ նշում է Ղանալանյանը, «Հավերժական սերը»-ը «աչքի է ընկնում իր արևելյան երանգավորումով, գունեղ ու ճոխ լեզվով, բանաստեղծական վառ ու ինքնատիպ պատկերներով, որոնք հոյակապ քանդակների նման զարդարում են գրվածքի ողջ շենքը»¹⁵:

Լուսակերտ է ապարանքը Թադմորի, Անապատում, որպես երազ ոսկեհյուս. Յոթն հարյուր սյունի վրա մարմարի Սլանում է աշտարակը երկնասույզ¹⁶:

Գեղարվեստական խոսքի մեծ ուժով Իսահակյանը պատկերել է իր համար այնքան հարազատ եթերային մաքուր սիրո հետ կապված ապրումները, վերարտադրել է անարձագանք ու անմուրազ սիրո ծանր ողբերգությունը: «Ստեղծագործական ներշնչման հատուկ առարկա է դարձել բանաստեղծի համար հասարակական-բարոյական բարձր գաղափարներով և մարդկային ազնիվ զգացումներով տոգորված սիրո ռոմանտիկան, որն ընդունակ է մղելու մարդուն դեպի անձնագրոհություն, դեպի հերոսացում, որն ընդունակ է արհամարհել տալու մահը», – գրում է Ա. Ղանալանյանը:¹⁷

¹⁵ **Ղանալանյան Ա.**, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, էջ 23:

¹⁶ **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 2, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 179–182:

¹⁷ **Ղանալանյան Ա.**, Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, էջ 14:

Ժամանակը իր վախճանին կհասնի, Եվ արևը մի բուռ մոխիր
կդառնա,

Բայց իմ սերը վախճան չունի, հուն չունի,
Նա հավերժ է, նա անշեջ է, նա անմահ...¹⁸

Իր արվեստով Թադմորի ապարանքի վերոհիշյալ նկարագրությո-
ւունը չի զիջում Էլ-Սամանի հրաշագեղ Բամբիշի բարեմասնությունների
գովքը.

Գահի վրա երիտասարդ Էլ-Սաման
Մեղմ գրկել է հրաշագեղ բամբիշին.
Կրծքի վրա հյուսքը նրա – ծփծփան,
Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին:
Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի՝
Չունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ծյունաթույր
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիշի¹⁹:

Բանաստեղծական խոսքի մեծ ուժով ու պաթոսով են շնչում լե-
գենդի մեջ Էլ-Սամանի սիրային խոստովանություններին նվիրված տո-
ղերը, ուր բանաստեղծը ինքնատիպ պատկերներով բացահայտել է իր
հավատամքը հավերժող ու անանց սիրո մասին.

Բարձր են երկրի ձեղունները, նազելի՛ս,
Բայց իմ սերը բարձրաբարձր է նրանցից.
Խոր են երկրի հիմունքները, նազելի՛ս,
Բայց իմ սերը խորախոր է նրանցից²⁰:

Որքան զմայլեցուցիչ, արևելյան շքեղ գույներով է նկարագրում
Իսահակյանը Անթարի և Բամբիշի սիրո ժամանակը՝ Լիբանանից փչող
սյուփով ու արևելյան եթերայուղերով, երբ անապատի շունչն անգամ
իսկ չկար.

Չէացնող համբույրներում դյուֆական,
Հանց հինավուրց հեքիաթական գինու մեջ,
Թալկանում է և հալչում է Էլ-Սաման...
Ժամանակը դառնում՝ վայրկյան ու հավերժ...
Ապարանքի երենոսյան դռներից

¹⁸ **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 179–182:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

Երազանուշ մուշկ ու կնդրուկ է բուրում.
Մանկլավիկներ ու նաժիշտներ ցնձալից
Նվագում են, ու երգում են, ու պարում...²¹

Սակայն Իսահակյանի ստեղծագործության մեջ երկուսն էլ հողեղեն են ու դատապարտված մահվան, միայն նրանց սերն է հավերժական. գրողը ստեղծում է զգայուն, անկեղծ հույզերի, քնքուշ ելևէջների յուրօրինակ պատկեր.

Լռությունը մահվան թևով ծվարած՝
Առկայծում է կանթեղն աղոտ, մենավոր,
Եվ մեռնում է հեզ բամբիշը դալկացած
Էլ-Սամանի կրծքի վրա սգավոր:
Նա մեռնում է ինչպես ցողը բողբոջում,
Մանկիկն ինչպես սուրբ գրկի մեջ մայրական²²:

Մահը՝ այդ գործյան հանգույցը և մարդկային տանջանքի ու մաշող մտորման մշտնջենական առարկան, հուսահատ ու դառն մրմնջացնում է Էլ-Սամանին: «Հավերժական սերը»-ը բալլադում ավելի շատ երևում է իսահակյանական ռոմանտիկական ընդվզումը, քան սիրատուհոր հոգու հեկեկանքը, ավելի շուտ ուժեղ անհատի խռովք կա, քան համակերպության մորմոք: Իսահակյանի անկրկնելի տողերում նկատվում են արհամարհանքի ու ցասման տարտամ հնչյունները, հերոսի հոգեմաշ մոնչյունը: Հերոսի բողոքը մի արտակարգ ուժ և ռոմանտիկական մեծություն է տալիս Իսահակյանի բանաստեղծական անհատականությանը:

Եվ հրձծում է, աղոթքի պես շշնջում
Հեզ բամբիշի ականջն ի վար Էլ-Սաման:
– Կըխորտակեմ կամարները երկնային,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս.
Ե՛վ կվանեմ, և՛ կհաղթեմ չար մահին,
Ես չեմ թողնի, ես չեմ թողնի՝ դու մեռնիս:²³

Արևելյան ավանդույթները և Իսահակյանի սիրո մտորումները այն ենթախորքն են, որ հասկանալի են դարձնում գրողի ստեղծագոր-

²¹ Նույն տեղում:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում:

ծության հերոսի պայքարը, բողոքը մահվան դեմ, նրա՝ որպես հավեր-
ժական սիրո հաղթանակի աներկբա փիլիսոփայությունը.

Եվ գրկել է դժգունացող բամբիշին,
Մահվան հանդեպ սուր ու վահան է շարժում.
Եվ բամբիշի սառած-մեռած շրթների
Իր հրեղեն սերն ու շունչը ներարկում:²⁴

Անապատը և ժամանակի մոռացության ավերիչ փոշին պատում
են հիասքանչ քաղաքը, այն վերածում ավերակների կմախքի, սակայն
աննվաճ են մնում հավարժական սիրո առջև.

Անապատը դեղին քղանցքն է փռել
Եվ ծածկել է ապարանքը Թադմորի...
Եվ ավազուտ շիրմի վրա մենավոր
Աշտարակն է մնում կանգուն ու վկա,
Որ իմանան վառ աստղերը հեռավոր
Էլ-Սամանի սերը հզոր ու անմահ:
Որ աշխարհին պատմեն սերը հաղթապանծ.
Էլ-Սամանի սերը՝ անա՛նց, հավերժո՛ղ,
Քարավաններն ու ճամփորդներն երկյուղած
Հեռուներից հեռուն եկող-գնացող...²⁵

Իսահակյանը պատմության վերջնամասը ներկայացրել է նոր
մեկնաբանմամբ: Բամբիշի մահից հետո բնությունը ևս կերպարանա-
փոխվում է: Գունաթափվում է պալատը և շրջապատվում մարմարե աս-
տիճաններն ի վեր ելնող ավազով:

Շատրվաններն հեծկլտում են ու լալիս,
Եվ սյունից սյուն սարդը ոստայն է հյուսում.
Անապատի հողն է միայն այց գալիս
Եվ գահի շուրջ կաղկանձում ու փսփսում:
Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին,
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հյուծված բամբիշին:²⁶

²⁴ Նույն տեղում:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

Սիրո հավերժությանը ձգտող Իսահակյանը լեգենդների ու ավանդությունների աշխարհում է որոնել ստեղծագործական ներշնչումները. «Նրա չափածո և արձակ լեգենդներում հավերժության գաղափարը մարմնավորվում է նոր կողմերով ու երանգներով»:²⁷ «Հավերժական սերը» բալլադում Իսահակյանը փառաբանում է Էլ-Սամանի տիեզերական ու անմահ սերը, զգացում, որ տրոփում է թերևս նրա բոլոր քնարական ստեղծագործություններում: Ամենուր Իսահակյանի կյանքի ու մահվան վերաբերյալ մտորումները տեղավորվում են հավերժի փիլիսոփայական հարցերի շրջանակում: Իհարկե, ի վերջո մարդը ֆիզիկապես անէանում է, բայց, ինչպես նկատում է Մ. Մկրյանը, «անշեջ» սիրո ձգտումը-գաղափարը մնում է անմահ»²⁸:

Անսպառ ու անհուն կենսասիրության, մարդու հանդեպ անմացորդ սիրո ու անձնագոհության հունով է ծավալվում Իսահակյանի «Հավերժական սեր»-ը՝ ստվերի մեջ թողնելով հեղինակի՝ մահվան զգացողությանն առնչվող խորհրդածությունները:

Գրականագետ Ավիկ Իսահակյանը նշում է, որ չափածո փիլիսոփայական յուրօրինակ կտորներ կարող են ընկալվել նաև Իսահակյանի գրած նամակների շատ տողեր: Վարպետը ազնվորեն խոստովանում է Ս. Իսաչատրյանին. «Մի մոմենտ ևս՝ Ադամ գրկած ունի Եվային, բայց տեսնում է հեռվում Լիլիթին՝ ստվերային, երազային, մշուշային... այս կետը իմ պոեմայիս հիմնական գաղափարներից մեկն է, որ մարդ հաճախ մեկին գրկած՝ մյուսին է երազում, նրան՝ որ թռավ, որ անմատույց էր»:²⁹

Հավերժական սիրո թեմային Իսահակյանը շքեղ պատկերավորումներով անդրադարձել է այս արևելյան ավանդագրույցում: Երկրային գեղեցկություններն այստեղ մրցում են «Լիլիթի» դրախտային գեղեցկության հետ: Ուսումնասիրելով արաբական ավանդագրույցները՝ Իսահակյանը նկատում է Թադմորի կամ Պալմիրայի գեղեցկուհի փերիներից մեկին՝ Լիլիթին: Նրա հետ է համեմատվում անգամ Անթարի հավատարիմ նժույգը, որը համարվում է Լիլիթի կենդանական փոխա-

²⁷ **Մկրյան Մ.**, Իսահակյանի հումանիզմը, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 101–102:

²⁸ Նույն տեղում:

²⁹ **Իսահակյան Ավ.**, Երկերի լիակատար ժողովածու, հ. XIII, Եր., «Գիտություն» հրատ., 2020, 479 էջ :

կերպումներից մեկը: Ըստ արաբական ավանդությունների՝ Լիլիթի գերեզմանը գտնվում է սիրիական Թադմորում: Արևելյան հիշյալ ավանդագրույցներին քաջաձանոթ Իսահակյանը, ուսումնասիրելով նաև հրեական «Թալմուդ» առասպելը, «Հավերժական սերը» ստեղծագործության արձակ (1911) և չափածո (1914) տարբերակներից հետո գրում է «Լիլիթը» (1921): Գրողը փերիների պարզևած հավերժական սերը փոխարինում է Լիլիթի՝ Ադամին պատճառած անհաս սիրո հավերժական տառապանքով՝ հիմնվելով թերևս նաև Լիլիթի ավանդագրույցների՝ Պալմիրայի հետ կապված տարբերակների վրա: Իսահակյանը «Լիլիթ» արձակ լեգենդ-պոեմում պատմում է հրեղեն կնոջ մասին, որին արարել էր դեռ Եվայից առաջ Ադամի մենությանը վերջ տալու համար. «Աստված՝ երկինք ու երկիր և բոլոր կենդանիներն ու բույսերը իր արարչական մի սոսկ խոսքով ստեղծելուց հետո՝ առավ անասունների ոտքի տակ ընկած հողից մի կտոր և նրանից ստեղծեց մարդուն:

Ստեղծեց նրան, որ սա սքանչանա իր վեհ գործերի վրա և փառավորե աստվածային անունը»³⁰:

Իսահակյանի պոետական հայացքը մշտապես ակնկալել է մեծ ու համապարփակ չափումներ, դեգերել սիրո տիեզերական անսահման տարածություններում, երգել է քնարական յուրօրինակ խոսքերով, և սա պարզապես նվագ չէր, այլ Ադամի սիրավառ սերն էր, որ շիթ-շիթ ծորում էր եղեգնափողի միջից և դառնում արցունք ու տենչանք, տենչանք ու տրտունջ:

Եվ երգում էր նա.

– Լիլիթ, Լիլիթ, դու իմ ճակատագիր:

Առանց քեզ ի՞նչ է անմահությունը:

Դու հեշտանքի դրախտն ես, Լիլիթ,

Հրաշքների և հմայքների միակ դրախտն ես դու:

Երազն ես դու, հիացքն ու դյութանքը, Լիլիթ,

Դու չճաշակված գաղտնիքն ես, Լիլիթ,

Արևադրյունն ես դու, Լիլիթ,

Բոլոր տանջող և ապրեցնող հրապույրների արևադրյունը:

Անհաղթելի կինն ես դու, Լիլիթ,

³⁰ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 3, Եր., «Հայաստան» հրատ., 1975, էջ 185–209:

Լիլիթ, հավիտենակա՛ն Լիլիթ. ...³¹

Լինելով հրաշագեղ էակ՝ Լիլիթը խելքահան է անում Ադամին, սակայն Լիլիթին Ադամը ամենևին չէր հետաքրքրում: Իրեն համարում էր դրախտի ամենակատարյալը, իսկ Ադամը հողեղեն էր, երբեք էլ չսիրեց և չհնազանդվեց նրան, ինչպես պատգամել էր նրան Աստված: Ավելին, հրեղեն կինը հրապուրվում և հնազանդվում է սատանային: Անգամ այդ ժամանակ խենթացած Ադամը պատրաստ էր ներել Լիլիթին, քանի որ սիրում էր կուրորեն ու անմնացորդ. «Անհույս էր Ադամի հոգին և, նզովելով աստված ու անմահություն՝ մահ էր տենչում: Եվ աստծուն լսելի եղան Ադամի հառաչանքները. կարեկցեց նրան, և ինքն իր մեջ սուզված խորհեց, որ անկարելի էր վերև սլացող հուրը ընկերացնել երկրին կառչող հողին»:³²

Տեսնելով Ադամի տանջանքներն ու լսելով նրա հառաչանքները՝ Աստված ցանկացավ կարեկցել նրան և Ադամի կողոսկրից ստեղծեց Եվային՝ առաքինի, հնազանդ ու գեղեցիկ: Սակայն անգամ այդ ժամանակ էին Ադամի սիրտն ու միտքը Լիլիթին տենչում: Սիրատենչ ու կենսասեր Իսահակյանի համար առեղծվածային ու անըմբռնելի էր թվում ոչ միայն սերը, այլև կյանքն ինքնին, սիրո նման հրապուրիչ ու խուսափուկ է կյանքը, և սիրո նման անհագուրդ՝ ապրելու տենչը. Ադամը մեռնում է՝ տենչալով Լիլիթին, առանց վայելելու սիրո երջանկությունը: Գրողը վարպետությամբ մարմնավորել է Եվայի և Լիլիթի կերպարները. «Եվա» էին հնչում նրա շրթները, սակայն «Լիլիթ» էր արձագանքում նրա հոգին: Ադամի վիշտ ու տառապանքը, սիրո անհասանելիությունը Իսահակյանը բացատրում Լիլիթի «հավերժ կանացի» առեղծվածային էությամբ: Սակայն դրանով չի սպառվում բանաստեղծի այս գողտրիկ գրվածքի փիլիսոփայական իմաստը: Գրողը հանգում է նրան, որ ոչ միայն իրականության մեջ, այլև «երանելի» դրախտում է բացակայել երջանիկ սերը, և որ մարդկությունը տառապում է՝ հենց «առաջին մարդուց»՝ Ադամից սկսած: «Լիլիթ»-ի հիմքում բանաստեղծը դրել է սիրո անհասանելի և առեղծվածային լինելու գաղափարը: Ադամը սիրում, տենչում է Լիլիթին, բայց Լիլիթը նրա համար մնում է անհասանելի. «Եվ ապրեց Ադամ՝

³¹ Նույն տեղում:

³² Նույն տեղում:

սպասելով ու տենչալով միշտ Լիլիթին, և մեռավ Ադամ՝ հառաչելով ու երագելով միմիայն Լիլիթին...»:³³

Այսպիսով, Իսահակյանի «Հավերժական սերը» և «Լիլիթը» ոչ միայն բարձր գեղարվեստականությամբ օժտված սիրային լիրիկական գործեր են, այլև դրանք ունեն հասարակական, իմացական արժեք: Որքան էլ հերոսների տառապանքը համատարած է, և ճշմարտությունը՝ կորուսյալ, որքան ունայն է մարդկային ձգտումը, այնուամենայնիվ, կա կյանքը, բնության հավիտենական շունչը, կա նաև մի աներևույթ իմաստություն, անսպառ սեր, որով լցված է տիեզերքը, կա ստեղծումի հանճարը, որ հրաշակերտում է հոգու և մտքի արժեքները: Եվ կյանքի անսկիզբ ու անվերջ հոսքի մեջ Իսահակյանը բացասման ու հաստատման, պատճառի ու հետևանքի մշտահոլով խորհուրդն է ներկայացնում աշխարհի հավերժության տիրույթում: Բանաստեղծի «մենակ զգալու և մարդականցից-աշխարհից առանձնանալու զգացումը մասամբ բխում է սիրո անհաջողությունից»:³⁴

Դիպարկումներ

Մեր կարծիքով սիրո անհասանելիության գաղափարի իրական հիմքը այն խոր անջրպետն էր, բացասումը, որ նաև սիրո խնդրում ընկած էր Իսահակյանի իդեալի և իրականության միջև: Ուսումնասիրելով «Հավերժական սերը» և «Լիլիթը»՝ առանձնացրել ենք երկու դիտարկում:

Երկու գործերում էլ Ավ. Իսահակյանը բնության պատկերները նկարում է շատ նրբորեն, և եթե իրականության փոքրիկ կտորներ էլ ցույց են նրա ստեղծագործությունների մեջ, այդ էլ ռոմանտիկական ավելի զգայուն և արտահայտիչ դարձնելու համար է: Օգտվելով զուգահեռականության օրենքից, բնության և մարդու ներաշխարհի համեմատական նկարագրից՝ Իսահակյանը «Հավերժական սերը» և «Լիլիթը» ստեղծագործությունները դարձել է դուրեկան հնչյունների մի հյուսվածք, անձնական մորմոքումների ու ցնորքների արտահայտման ճկուն մի գործիք: Ջրբաշյանը նշում է. «լայնորեն է «կլանվում բնությունը Իսահակյանի քնարական տրամադրությունների մեջ»:³⁵ Որքան էլ ստեղծա-

³³ Նույն տեղում:

³⁴ Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1979, էջ 32:

³⁵ Ջրբաշյան Էդ., «Չորս գագաթ», Եր., «Սովետական գրող» հրատ., 1982, էջ 125:

գործությունների փիլիսոփայական առանցքն է կազմում սիրո կենսահաստատ, հզոր ուժը, որն ընդունակ է հաղթահարելու բնության և հասարակական կյանքի բոլոր հակոտնյա ուժերին, այնուամենայնիվ, այդ գործերը սկսվում են բնության նուրբ երանգներով: Օրինակ՝ «Հավերժական սերը» բալլադում կան այս տողերը.

Շուրջը նազուկ արմավենու պուրակներ,
Ուր երգում են հրաշք-հավքեր կարոտով,
Շատրվաններն հուրհրում են կրակներ,
Ծաղիկները պճնազարդում արծաթով:³⁶

«Լիլիթ» արձակ լեգենդ-պոեմում ուշագրավ են հետևյալ հատվածները. «Նորաստեղծ Ադամը հիացավ աստծու հրաշալիքների վրա: Մեկ-մեկ նայեց անասուններին, թռչուններին և զանազան բույսերին, զարմացավ և փառաբանեց մեծ վարպետի անունը», կամ «Յնորագեղ շնորհներով ծագեց արշալույսը և ծավալվեց դրախտի վրա՝ թաթախելով ամեն չնչին գուլձն իսկ շողերի և գույների անճառ կախարդանքի մեջ»:³⁷

Արարիչը անգամ Լիլիթի հրաշագեղ կերպարը ստեղծելիս բռնում է դեպի վեր սուրացող կրակը և նրա բեկբեկուն, ճախրուն բոցերից ստեղծում անդրանիկ կնոջը՝ Լիլիթին:

Երկու ստեղծագործություններում էլ Իսահակյանն ասես ցանկացել է ընդգծել՝ ոչ թե սերն է ներդաշնակեցվում բնության գեղեցկությանը, այլ հակառակը՝ սիրո վայելքն է իր գեղեցկությունը փոխանցում բնությանը: Գրողը կիրառել է մարդկային հոգեվիճակի և բնության պատկերների զուգահեռականության սկզբունքը (պարալլելիզմը): Բնությունը ոչ թե ինքնին գեղեցիկ է, այլ արձագանքում է մարդկային հոգեվիճակներին: Նույն իրավիճակը տեսնում ենք նաև «Լիլիթում», ուր հերոսուհին իր ներկայությամբ հրեղեն հմայք է հաղորդում դրախտի գեղեցկությանը, որը հետո ծանձրացնելու էր Ադամին:

«Հավերժական սերը» բալլադում բնության փոխվելը նրանց մարմինների քայքայմանը զուգընթաց ավելի ցայտուն է երևում չափաժո տարբերակում, ուր բնության զուգահեռականությունը արտահայտվում է բանաստեղծական յուրաքանչյուր քառատողում, որտեղ չորս տո-

³⁶ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 179:

³⁷ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 3, էջ 185:

ղերից երկուսը վերաբերում են սիրահարներին, իսկ մյուս երկուսը՝ բնության ու ապարանքի նկարագրությանը.

Օձն է սրբում սառն ու փայլուն կողերով
Էլ-Սամանի ոսկորների լուռ փոշին,
Բայց Էլ-Սաման կմախքային ձեռներով
Պիրկ գրկել է նորից հյուծված բամբիշին:³⁸

Իսահակյանի ստեղծած բալլադում, պայմանավորված երկու սիրահարների մահկանացու լինելով, բնությունն ու երբեմնի շքեղ ապարանքի աշտարակն են շարունակում պատմել հավերժական սիրո մասին.

Արմավներն են լուռ սոսավում թախծալից,
Եվ մարել են վառ ծաղիկներն ու ջահեր:
Պուրակները չորացել են, չքացել,
Եվ շիջել է լույս երազը սյուների.
Անապատը դեղին քղանցքն է փռել
Եվ ծածկել է ապարանքը Թադմորի...³⁹

Բարձր գնահատելով Իսահակյանի քնարերգությունը «Հավերժական սերը» և «Լիլիթը» ստեղծագործություններում՝ չենք կարող չնշել մի դիտարկում ևս: Իսահակյանի մեծարվեստ պոեզիայում սիրո մոտիվը և կինը շատ միակողմանի են պատկերված: Կինը ներկայացված է իր արտաքին, գերազանցապես մարմնական գեղեցկությունների գունագեղ նկարագրությամբ: Օրինակ՝ «Լիլիթ»-ում ներկայացված են մի քանի դրվագ. «...Ավելի բուրումնավետ է քո կուրծքը, քան երկնացող բրաբիոնները և քան բալասանն ու ստաշխը, որ ծորում են դրախտի ծառերից՝ օծելու համար աստծու քայլափոխները», «Եվ կրակոտ շրթներով համբուրում էր Ադամ Լիլիթի մարմինը և հոտոտում էր նրա կողերի անուշաբույր թարմությունը, որ ավելի թարմ էր, քան ստեղծման օրվա անդրանիկ ցողը՝ սեգերի և սաղարթների վրա»:⁴⁰

Իսկ «Հավերժական սերը» բալլադում գահի վրա նստած և հրաշագեղ բամբիշին գրկած՝ երիտասարդ Էլ-Սամանը կարծես դեգերում է սիրո տիեզերական անսահմանության մեջ.

«Կրծքի վրա հյուսքը նրա – ծփծփան,

³⁸ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 2, էջ 179:

³⁹ Նույն տեղում, էջ 179–182:

⁴⁰ Իսահակյան Ավ., Երկերի ժողովածու, հ. 3, էջ 185–209:

Հանց նունուֆար լույս-աղբյուրի երեսին:
Փերուզ ծովը, որ փարում է մշտաթոր
Սեպ ժայռերը Լիբանանի փեշերի՝
Չունի այնպե՛ս, այնպե՛ս փրփուր ձյունաթույր
Ինչպես կուրծքը լուսապայծառ բամբիշի»:⁴¹

Իսահակյանի ստեղծագործություններում կինը՝ որպես սիրող կողմ, պասիվ է, բանաստեղծը նրա սիրահույզ ձայնը գրեթե լսելի չի դարձնում ընթերցողին, և դրա հետևանքով էլ Իսահակյանի «Հավերժական սերը», «Լիլիթը» գործերում պատկերված չեն կնոջ սիրտը, հոգին, որ լցված են սիրով երիտասարդի նկատմամբ: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ Իսահակյանի այդ ստեղծագործություններում ներկայացվում է տղամարդու սիրային ապրումները, նրա սիրային երազանքները, տառապանքները, սպասումներն ու հիասթափումները. ամենուր հանդես է գալիս տղամարդը՝ որպես ակտիվ կողմ: Ներկա է միայն սիրահար տղամարդը, իսկ կինը, հատկապես «Հավերժական սերը» բալլադում, չխոսկան է, նրա գոյության մասին իմացվում է միայն ուրիշի հիշատակությամբ: Կարծում ենք կնոջ բացակայությամբ է պայմանավորված, որ սիրահար տղամարդը՝ Էլ-Սամանը, առաջին պլան է բերում բնությունը, մարտահրավեր է նետում բնության օրենքներին՝ գոչելով, որ կվանի և կհաղթի չար մահին ու չի թողնի մեռնի սիրուհին:

Իսահակյանի արձակ և չափածո լեզբներին անդրադարձել են Ա. Ղանալանյանը, Գ. Հովհաննիսյանը, Ավ. Իսահակյանը, Մ. Մկրյանը, Ա. Մուշեղյանը, Ա. Մկրտումյանը, Հ. Վանյանը: Նրանցից ոմանք Իսահակյանի քնարերգությունը մերժված սիրո մորմոքի երգեր են համարում: Բայց անգամ սիրո մերժումն էլ ընթերցողը բանաստեղծից է լսում: Որևէ հստակ պատկերացում չտալով սիրուհու-կնոջ ներքին, հոգեկան աշխարհի մասին՝ բանաստեղծը առաջին պլան է մղում սիրահար տղամարդուն:

Իսահակյանի սիրո լիրիկան հասարակական-բարոյական տեսակետից մաքուր է և անկեղծ, բարձր մարդկային ազնիվ զգացմունքներով է տոգորված:

⁴¹ Նույն տեղում:

Նման իմաստ ու նշանակություն ունի Ավ. Իսահակյանի սիրո ռոմանտիկան: Ռոմանտիզմի դիպուկ բնորոշում է տալիս Վարպետը. «Ես գիտակցաբար եմ վարվել այս խնդրում. իմ կարծիքով քնարականի/ լիրիկայի/ լեզուն պիտի լինի շատ պարզ, անսեթևեթ աղքատ, նախնական... սրտի անպաճույճ լեզու» և գրողի տեսությամբ «ամենակատարյալ լիրիկան ժողովրդի երգն է»:⁴²

Եզրակացություններ

Ամփոփելով կարող ենք ասել, որ «Հավերժական սերը» և «Լիլիթը» ստեղծագործությունները ընթերցողին օգնում են ճիշտ հասկանալ հավերժական սիրո իսահակյանական ռոմանտիզմը՝ գերբնականից իրական աշխարհի և հին արևելյան ավանդազրույցի նորովի մեկնաբանությամբ: «Նա կառուցեց փիլիսոփայական մի համապարփակ աշխարհ, հայ քնարերգությունը նա ևս բարձրացրեց համաաշխարհային չափանիշների»,- նշում է Ս.Սարինյանը:⁴³

Արևելյան ժողովուրդների բանարվեստից և փիլիսոփայությունից վերցրած դեպքերը հաճախ Իսահակյանի համար ելակետ էին իր ժողովրդի ճակատագիրն ու կենսակերպը պատկերելու համար: Եվրոպական կրթության, գիտելիքի անսպառ պաշարի և ստեղծագործական բարձր թռիչքի շնորհիվ Իսահակյանը կարողացավ հայ արձակը համալրել փիլիսոփայական համամարդկային նշանակություն ունեցող գործերով՝ իր հաստատուն տեղը գրավելով հայ նոր գրականության անդաստանում: «Բանաստեղծի այդ ստեղծագործությունները հայ գրականության անկորնչելի գոհարներից են...կապրեն այնքան ժամանակ, որքան կապրի ինքը՝ հայ ժողովուրդը...»⁴⁴:

⁴² «Սովետական գրականության», 1971, № 1, էջ 139:

⁴³ «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1975, № 3, էջ 27:

⁴⁴ Ղանալանյան Ա., Ավ. Իսահակյանի ստեղծագործության ժողովրդական ակունքները, էջ 103:

НУНЕ МКРТЧЯН

*Кандидат филологических наук, доцент
старший научный сотрудник Институт литературы НАН РА*

ФИЛОСОФИЯ ВЕЧНОСТИ ЛЮБВИ В ТВОРЕНИЯХ ИСААКЯНА («ВЕЧНАЯ ЛЮБОВЬ», «ЛИЛИТ»)

Резюме

Для романтической поэзии, переживающей заметный подъем в начале XIX века, весьма характерны произведения Аветика Исаакяна, одного из крупнейших и наиболее влиятельных армянских писателей этого периода, ставшие символами идеальной любви.

Цель нашего исследования – представить и разъяснить с иных позиций философию вечной любви в произведениях Исаакяна «Вечная любовь», «Лилит», рассмотреть возвышенные, чистые лирические переживания, изображенные Исаакяном с большой художественной силой, рассмотреть трагедию неразделенной любви.

Научная новизна темы заключается в рассмотрении новых точек зрения на проблему любви, что приведет к расширению кругозора читателей, в популяризации идей вечности любви, принадлежащих гению Исаакяна, что позволит укрепить институт семьи и брака в современном обществе.

Каждый из нас рано или поздно начинает задумываться о вечных вопросах, связанных с жизнью, смертью, Богом, истиной, любовью, которая является самым романтическим душевным состоянием человека и движущей силой жизни. Наша задача – раскрыть особенности произведений Исаакяна «Вечная любовь», «Лилит», показать романтику любви, проникнутую высокими социальными и нравственными идеалами и благородными человеческими чувствами, ставшую для поэта особым предметом творческого вдохновения, способную побудить человека к совершению героических поступков, к самопожертвованию, к пренебрежению смертью, впер-

вые проанализировать наблюдения, касающиеся природы и женщины.

Посредством использования аналитико-описательного метода мы попытались представить произведения великого писателя, имеющие философское и общечеловеческое значение, рассмотреть исаакяновские особенности создания образов.

Подытоживая, можно отметить, что произведения Аветика Исаакяна «Вечная любовь» и «Лилит» порождают новые лирические мысли и дают ответы на вопросы, волнующие каждого из нас.

Ключевые слова: Исаакян, романтизм, жизнеутверждающая сила любви, лирические настроения, философия, пламенная, дивная Лилит.

NUNE MKRTCHYAN

Candidate, associate professor

*NAS RA M. Abeghyan Institute of Literature senior researcher,
philological sciences*

THE PHILOSOPHY OF ETERNITY OF LOVE IN ISAHAKYAN'S CREATIONS (“ETERNAL LOVE”, “LILIT”)

Abstract

The works of Avetik Isahakyan, one of the greatest and most influential Armenian writers of the beginning of the 19th century, which became symbols of ideal love, are typical for the romantic poetry, which experienced a noticeable rise in this period.

The aim of our research is to present and explain from other positions the philosophy of eternal love in Isahakyan's works “Eternal Love” and “Lilit”, to consider the sublime, pure lyrical experiences depicted by Isahakyan with great artistic power, as well as to consider the tragedy of unrequited love.

The scientific novelty of the topic lies in the consideration of new viewpoints on the problem of love, which will lead to the expansion of the horizons of readers, in the popularization of the ideas of the

eternity of love, belonging to the genius of Isahakyan, which will allow to strengthen the institution of family and marriage in the modern society.

Each of us sooner or later starts thinking about the eternal questions related to life, death, God, truth, love, which is the most romantic mental state of a person and the driving force of life. Our task is to reveal the features of Isahakyan's works "Eternal Love" and "Lilit", to show the romance of love, imbued with high social and moral ideals and noble human feelings, which became a special subject of creative inspiration for the poet, capable of inspiring a person to commit heroic deeds, to self-sacrifice, to disregard death, to analyze for the first time observations concerning nature and woman.

By using the analytical and descriptive method, we tried to present the works of the great writer, which have philosophical and universal significance, and to consider Isahakyan's peculiarities of creating images.

Summing up the above, it can be noted that Avetik Isahakyan's works "Eternal Love" and "Lilit" generate new lyrical thoughts and give answers to the questions that concern each of us.

Keywords: *Isahakyan, romanticism, life-affirming power of love, lyrical moods, fiery, marvelous Lilit.*